ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2026 թվականի № 193-Ա

ՍՈՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով *Սոնա Աբրահամյանի*՝ 2026 թվականի մայիսի 19-ի № 14 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սոնա Աբրահամյանին*** տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից հինգ աշխատանքային օր՝ 2026 թվականի մայիսի 21-ից 27-ը ներառյալ:

2. ***Սոնա Աբրահամյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության գլխավոր հաշվապահ ***Թամարա Նարիմանյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր հաշվապահ ***Թամարա Նարիմանյանին*** և «Արզականի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Արմենուհի Բաբաջանյանին*** ապահովել «Բջնիի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արզականի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտրանեկան բժիշկ՝ Արմենուհի Բաբաջանյանի)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թվականի մայիսի 20
ք. Հրազդան